քին մէջ տեսնալու բան մը չըլլալով՝ մէկէն սկսանք Տիւրէնպէրկ լեռնէն վեր ելլել որ աղահանքը մտնենք։

Կէս ժամու մը չափ լեռնէն վեր ելլալէն վերջը եկեղեցւոյ մը դիմացն հասանք որ բոլոր կարմրագոյն քարէ շինուած էր. և եկեղեցւոյն դիմացէն պզտիկ Ճամբէ մը քանի մը ոտք վար ինջնալով աղահանքի վերակացուին տունը հասանք։ Աղահանքը մտնելու համար Սալցպուրկ նստող աղահանքի ընդհանուր կառավարէն հրաման ունէինք, ըստ սովորութեան, ուստի տանը դիմաց հասածնուս պէս, եկան թղթերնիս քննեցին նայեցան ու քաղաքավարութեամբ մը ներս հրամցուցին։ Դաւական ընդարձակ խուց մը մտանք, ուր պատերուն վրայ աղահանքին ներքին յատակագիծ տախտակներն կախած էին, սեղանատախտակի մը վրայ ալ աղահանքին պզտի գաղափարը դրուած էր, բարակ փայտէ շինուած, ու գոյնզգոյն թղթերով նշանակած էին ներքին Ճամբաներն, անոնք որ բոլորովին գոցուած էին զատ գոյն ունէին, և անոնք ալ որ հիմա կը գործածուէին՝ զատ։ Երկայնահասակ մարդ մը դիմացնիս գիրք մը դրաւ որ անուննիս ստորագրենք. առանց խօսելու այս գործողութիւնն լմընցընելէն վերջը, երբ կը սպասէինք թէ ինչ պիտի ընենք, մէյ մ՝ ալ ծառայ մը ներս մտաւ, ձեռքը խել մը Ճերմակեղէններ սեղանատախտակի մը վրայ դրաւ. ձեռքերնէս գրէ խարկնիս, գաւազաննիս առին, վրայի զգեստներնիս ալ հանել տուին, ու մէյմէկ Ճերմակ լայն տափատ (Բանդալոն), մէյմէկ Ճերմակ բաՃկոն հագուցին. գլուխնիս գոյնզգոյն հաստ գտակ մը, ետևի կողմէն կէս մէջքերնէս կէս մէջը երկայնութեամբ կաշիի կտոր մը, (որուն ինչ բանի պէտք ըլլալը նկարագրութեան ընթացքէն կ՝իմացուի). աջ ձեռուընիս հաստ կաշիէ ձեռնոց մը, ձախ ձեռուընիս ալ վառած լապտեր մը, այս յանկարծական փոփոխութիւններս մէկմէկու վրայ տեսնելով սկսանք ծիծաղիլ։

Աղահանքի պահապաններէն երկու հոգի եկան, քաղաքավարութեամբ մը հրամցուցին որ իրենց ետևէն երթանք. տանը դռնէն դուրս ելանք, ու տանը ձախ կողմէն քանի մը ոտք առաջ երթալէն վերջը՝ կամարապատ ցած դրան մը դիմացը հասանք, որուն վրայ գրած էր.

Օպէր Շդայնպէրկ 1450.

Այս դուռը երկայն և մութ ստորերկրեայ Ճամբու մը մուտք էր, և աղահանքին հինգերորդ յարկն կը խօթէր։

Մաւր գիտելիք։

Եւրոպան լուսաւորութիւն։ — Լոնտրա աս մատերս նոր ընկերութիւն մը հաստատուած է սովորական կազի լուսաւորութեան տեղ ելեքտրական լոյսը փոխանակելու համար. աս ընկերութեան դրամագլուխն է 300,000 լիրա սթերլին որ եօթը միլիոն և կէս ֆռ. ըսել է. բոլոր քաղաքը այս լուսով պիտի լուսաւորուի, որ եղած հաշիւներուն նայելով սովորական կազէն աւելի ածան պիտի խնայ գոգցես անոր կէսին չափ։

Զառիվայր իջնող ջգնարք։ — Խոտալացի մեծանուն թոզելլի Ճարտարապետը որ խել մը տարիներ 'ի վեր ետևէ էր այնպիսի սանձ մը գտնալու որով շոգեշարժ կառաց զառիվայր տեղերէ իջնալու ատեն ունեցած բուռն վայրարերման սասկութիւնը չափաւորէ. վերջապէս յաջողելով իր հնարքին մէջ աս օրերս առաջին փորձը ըրաւ 'ի ներկայութեան բազմաթիւ հանդիսականաց։ 1000ին 120 հոկումն ունեցող բարձրութեամբ մը ծայրէն թող տալով իր ծանրամարմին երկաթէ կառքը քսանըհինգ մանրկրորդի մէջ, ինչպէս որ առաջուց ըսեր էր, ջրս հարիւր մեթր տեղ վար սահելով առանց ցնցասի ու առանց հաւասարակշռութիւնը կորսնցընելու, իբրև թէ գուրան տեղ քալէր, եկաւ կեցաւ բլրին ստորոտը։ Թոզելլի անանկ վատահ էր իր փորձին անվնաս յաջողելուն վրայ, որ կառքին վրայ կեցած ինքը անձամբ կառավարեց այս առաջին արշաւանքը 'ի մեծ զարմանս ամենեցուն։ Իրեն հնարած գործիքին վրայ դեռ տեղեկութիւն մը չենք կրնար տալ, խիստ նորահնար ըլլալուն պատճառաւ։ Բայց ինչ որ կը տեսնուի իրեն դրութիւնը այս է, որ օդին ըրած ընդդիմադրութիւնը բաւական պիտի ըլլայ չափաւորելու երկրիս կեդրոնական ձգման ուժն որ այնչափ երագել կուտայ մարմնոց վայրաբերումը։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ